

Արտատպված է՝ Շուրմ-Ալեյխեմ, Վիպակներ և պատմվածքներ, Ե., Հայպետհրատ, 1964:  
Ռուսերենից թարգմանեց՝ Օլգա Սանահյանը:

ՊԵՏՔ ՉԷ ԲԱՐԻ ԼԻՆԵԼ

— Պետք չէ բարի լինել չափազանց,— ասում է քթին գորտնուկ, պատկառելի տեսքով մի հրեա, դառնալով ինձ և ծխախոտ վերցնելով:— Լսո՞ւմ եք, թե ինչ եմ ասում ձեզ: Պետք չէ բարի լինել չափից դուրս: Ես իմ բարությանբ, իմ զարշելի փափուկ բնավորությամբ փորձանքի մեջ ընկա, սեփական տանս մեջ դժբախտություն աճեցրի, երկո՞ւ դժբախտություն: Խնդրե՛մ, լսեցեք:

Տերը ինձ արժանի համարեց, որ ես բարի գործ կատարեմ, երկու որբ ուղարկեց: Աստված պատժեց, երեխա չտվեց, ես էլ ահա ուրիշներինը վերցրի, նրանց բարություն արեցի, մարդամեջ դուրս բերի, իսկ նրանք հիմա քարերո՞վ են հատուցում:

Ամենից առաջ ես պետք է ձեզ պատմեմ աղջկա մասին, թե որտեղից էր հայտնվել ինձ մոտ այդ որբուկը: Եվ պատմությունը ահա թե ոնց էր: Կինս ժամանակով մի քույր ուներ, իրենից փոքր, անունը Պերլ էր: Եվ նա, այդ Պերլը այսինքն, ինչ ասեմ ձեզ, գեղեցկուհի էր, աննման գեղեցկուհի: Դրանք բոլորն էլ գեղեցիկ են, իմ կինը հիմա էլ է գեղեցիկ: Գեղեցկության համար փեսացուները առանց օժիտի ամուսնացան, պատրաստ էին ոտքից գլուխ ոսկեզօծել: Բայց այդ մասին չէ խոսքը:

Երբ իմ քենին մարդու գնաց, բոլորն ասում էին, որ նա ոսկու կարասն է ընկել, մի այնպիսի բախտի է արժանացել, ինչպիսին հարյուր տարին մեկ անգամ է պատահում հարուստ ճնողների զավակ, հարուստ պապի, հարուստ հոր, հարուստ քեռու ժառանգ, մի խոսքով, շուրջ բոլորը հարուստներ: Երջանկություն: Բայց այդ մասին չէ խոսքը: Ցավն այն էր, որ ինքը՝ երիտասարդը, սատանան գիտե, թե ինչ էր: Այսինքն՝ ընդհանրապես վերցրած, նա բավականին հրաշալի տղա էր. ոչ հիմար էր, ոչ էլ խարդախ, բարի սիրտ ուներ, խաթրաշահ, զվարթ, բայց ի՛նչ, ի՛նչ կասես, որ շառլատան էր: Թող նա ինձ ների, նա արդեն այն աշխարհումն է... Այսինքն՝ ինչպես: Ի՞նչ կնշանակի շառլատան: Միբուր էր թուղթ խաղալ և այն էլ ինչպե՛ս: Հոգի էր տալիս: Խաղալու համար պատրաստ էր ոտքով հարյուր վերստ կտրել: Մկզբում ամիսը մեկ անգամ ընկերներին կհավաքեր ու ձմռան երկար գիշերներին կխաղար. խաղում էին «վաթսունվեց», հրեական «քսանմեկ», «տերտլմերտլ» և այլն: Հետո սկսեց ավելի շուտ-շուտ գնալ ու ինչ-որ կասկածելի մարդկանց հետ՝ անբանների, ձրիակերների... Եվ պետք է, որ գիտենաք, որտեղ թղթախաղ, այնտեղ ամեն ինչ... Այնտեղ արդեն ո՞վ կարող է մտածել երեկոյան աղոթքի մասին: Արժե ասել, որ նստում են նույնիսկ գլխաբաց<sup>1</sup>, որ խախտում են շաբաթը և այլ բաներ, որոնք վերաբերում են հրեական ադաթներին: Եվ կարծես, հակառակի նման, Պետլը՝ իմ քենին, առաքինի կին էր, աստվածապաշտ, և, իհարկե, ասելով ասում էր նրա թղթամոլությունը, և խեղճը օր ու գիշեր պառկած, գլուխը թաղած բարձի մեջ իր դառը ճակատագիրն էր լալիս, մինչև որ տկարացավ, սկզբում ոչ այնքան լուրջ, իսկ հետո ավելի ու ավելի լուրջ, մի խոսքով, Պերլը մեռավ: Բայց թե այդ մասին չէ խոսքը:

Պերլը մահացավ և մի աղջիկ թողեց վեց-յոթ տարեկան: Մարդը, սատանան գիտե, թե որ ջհաննամի տակին էր՝ Օդեսայում, և ինչպես էր խրվել թղթախաղի մեջ, որ քոռուփուչ արեց և՛ իր, և՛ հոր, և՛ պապի փողերը: Կարծեմ նաև բանտ ընկավ, հետո բավականին երկար ժամանակ ինչ-որ տեղ քարշ

<sup>1</sup> Ըստ հրեական կրոնի արգելվում էր անգլխարկ մարդամեջ դուր գալ:

էր գալիս, ինչ-որ տարօրինակ հիվանդություն ձեռք բերեց է և մեռավ դառն աղքատության մեջ: Ահա ձեզ համառոտ մի ամբողջ ընտանիքի պատմությունը, և ապա, այդպիսով, ինձ մոտ մնաց նրանց աղջիկը՝ Բեյզլը: Երբ ես նրան վերցրի, նա դեռ շատ փոքր էր, որովհետև, հասկանում էք, երեխեք չունեմ, աստված պատժել է, և թող նա փոխարինի, ասացի, հարազատ զավակիս: Ամեն ինչ լավ էր, բայց ահա փորձանք պատահեց. ինչ բան, որ շատ լավ է, քոռ կոպեկ չարժե: Մի ուրիշ ազգական, այդպիսի աղջկան խոհանոցում կպահեր, տանը գործ անել կտար՝ ինքնատեղ կզգեր, կվազեր այնտեղ, ուր կուղարկեին և նման բաներ, իսկ ինձ մոտ նա ապրում էր որպես իմ հարազատ զավակը. նույն հագուստից էր հագնում, ինչ որ կինս էր հագնում, նույն կոշիկները, նույն սնունդը: Բայց թե այդ մասին չէ խոսքը:

Հետագայում, երբ Բեյզլը սկսեց մեծանալ, ես նրան ուսումի տվեցի, և ինչ որ ճիշտ է, ճիշտ է, երեխան հաջող երեխա էր, խոնարհ, կանոնավոր, բարի, խելացի և լավը ինչպես աստծո աշխարհը. ես նրան անկեղծորեն սիրում էի, ինչպես կսիրեն հարազատ զավակին: Դե, երեխեքն էլ, ինչպես գիտեք, սնկերի նման են աճում, չես հասցնում ուշքի գալ, որ արդեն հարկավոր է փեսացուի մասին մտածել: Եվ հակառակի նման էլ իմ ազգականուհին աճում էր այնպես արագ, կարծես թթխմոր էին գցել՝ բարձրահասակ, սիրուն, առողջ, մի խոսքով, մի իսկական վարդ<sup>2</sup>

: Կինս կամաց-կամաց օժիտ էր ետ գցում փոխնորդից— շապիկներ, սավաններ, բարձի երեսներ: Ես էլ իմ հերթին ոչ այլ կերպ չէի մտածում, քան տալ նրան մի քանի հարյուր ռուբլու օժիտ, և աղջկան սկսեցին ուզողներ գալ: Էհ, ում հետ կարելի է նշանել մի այդպիսի որբ աղջկան: Ծնողներ չունի, հայրը, թող ինձ ների, մի օրինավոր մարդ չէր, հազար ռուբլու օժիտ չեմ կարող տալ, ուրեմն հարկավոր է նրան համապատասխան փեսացու որոնել, մի երիտասարդ, որը կարողանա նրան կերակրել: Իսկ որտեղի՞ց գտնես այդպիսի փեսացու, քանի որ հույս չկա, թե աղջկան օրինավոր ընտանիքներից կուզեն, իսկ արհեստավորի էլ ես չեմ ուզում, ինչքան չլինի աղջիկը ինձ ազգական է գալիս, կնոջս քրոջ աղջիկն է: Բայց աստված ինձ մի երիտասարդ ուղարկեց, դա քսանից մի քիչ անց գործակատար էր, որն արդեն չափազանց լավ վաստակում էր, փող էր ետ գցում և արդեն որոշ բան ուներ: Մի խոսքով, տղայի հետ խոսեցի, այո՛, գործը գլուխ կգար, ազնիվ խոսք: Աղջիկն իրեն դուր է գալիս: Խոսեցի աղջկա հետ. ի՞նչ ես ասում, ո՞ւմ ես ասում: Քարե պատ: Չի ցանկանում նրան, նա պետք չի իրեն, և վե՛րջ : Ախր քեզ ո՞վ պիտի առնի, ինչ է, բարոն Գիրշի թո՞ն ես: Թե պատից ձայն դուրս կգա, նրանից էլ դուրս կգա: Նայում է գետնին ու լռում: Բայց թե այդ մասին չէ խոսքը:

Հիմա ես պետք է պատմությանս կեսին կանգ առնեմ, ու ձեզ մի նոր պատմություն անեմ, որ կապված է այդ պատմության հետ, այսինքն՝ և սա, և նա կազմում են մի պատմություն:

Ես մի փոքր եղբայր ունեի Մոյշե-Գերշլ անունով: Նրա հետ մի այսպիսի պատմություն տեղի ունեցավ, ինձ մոտ պատմությունը պատմություններով է, և թող այստեղ ասված չլինի և ոչ ոքի համար ասված չլինի, մի ուրբաթ օր, բաղնիսում ուզում է սառը ջուր լցնել, վերցնում է տաք ջրով թասը, շուռ տալիս վրան ու խաշվում, ութ օր տանջվեց ու մեռավ, թողնելով կնոջը, միակ, վեց տարեկան տղայի հետ, որի անունը Պեյսյա է: Չէր անցել և կես տարի, որ այրիին փեսացուներ

<sup>2</sup> Բեյզլ — հրեերեն վարդ:

հայտնվեցին: Դա իմ հերսերը բերեց, գնացի նրա մոտ, այսինքն՝ հարսիս մոտ ու ասացի. «Եթե ուզում ես մարդու գնալ, գնա, իսկ երեխուն տուր ինձ»: Սկզբում մի քիչ կոտրատվեց, որպես թե լսել անգամ չի ուզում, բայց դես ընկա, դեն ընկա, մի կերպ համոզեցի: Երեխուն բերեց ինձ մոտ, իսկ ինքը գնաց ինչ-որ տեղ, Լեհաստան, այնտեղ մարդու գնաց և վատ չի ապրում... Բայց այդ մասին չի խոսքը:

Աստված արժանի համարեց, որ դեռ տղա էլ ունենամ: Ես ասում եմ «տղա», որովհետև ես նրան որդեգրեցի, իսկ տղան էլ հաջող տղա դուրս եկավ: Չե՞ որ նա եղբորս տղան է, և հարմար չէ, որ ես նրան գովեմ, բայց կարող եք հավատալ իմ ազնիվ խոսքին, որ մի ուրիշ այդպիսի Պեյսայ չեք գտնի, չեմ ասի ամբողջ աշխարհում, բայց ո՛չ մեր քաղաքում, ո՛չ հարևան քաղաքներում և նույնիսկ ո՛չ էլ գավառներում: Ջորջիանակ, ի՛նչ կցանկանաք, կարդա՞լ: Աչքիս վրա: Գրե՞լ: Համեցե՛ք, Հաշվե՛լ: Կարող է և հաշվել: Չե՞ք ցանկանա արդյոք ֆրանսերեն: Խնդրեմ, ձեզ հետ կխոսի ֆրանսերեն: Ցանկանո՞ւմ եք ջութակ: Կնվագի ջութակ: Ինքն էլ թև ու թիկունքո՞վ, սիրո՞ւմ, և մի լեզու ունի որ... էլ ո՛ր մեկն ասեմ, ո՛ր մեկը թողնեմ... Ասված է — հաջող է, և վերջ, ուրիշ բան ասելու պետք չկա: Դրան էլ ավելացրած նաև, որ ես նրան մի քանի հազար եմ տալիս՝ օժիտ, չե՞ որ եղբորս երեխան է, որին որդեգրել եմ, կնշանակի համարյա թե հարազատս է: Եվ փա՛ռք աստծու, հասարակ է ծագում չունի: Արժանի է մի լավ հարսնացուի, ճիշտ չե՞մ ասում: Եվ, իհարկե, նրան առաջարկում էին ամենապանչելի տեղերից, իսկ ես, հասկանալի է, քթիս չէի առնում: Հապա ինչպես: Հո չի՞ լինի, որ նրա նման մի կտրիճին վերցնես ու հենց էնպես տաս: Բայց թե դրա մասին չէ խոսքը:

Կարճ ասած, աշխարհի բոլոր ծայրերից աղջիկ էին առաջարկում՝ Կամենեցից, Ելիսավետգրադից, Գոմելից, Լուբեհից, Մոզիլյովից, Դնեպրից, Բերդիչևից, Կամենկայից, Բրոդից... Փեշով ոսկի էին տալիս ինձ՝ տասը հազար, և տասներկու հազար, և տասնհինգ հազար, և տասնութ հազար, գլուխս կորցրել էի, չէի իմանում, որ մեկին ուզեմ: Ու ես միտք արեցի ու ասացի, ինչու, ասացի, հեռուները հասնեմ, հայտնի չէ թե ուր և թե ո՞ւմ մոտ կընկնեմ: Քո կոշկակարը ավելի լավ չի՞, քան օտարի ռաբբին: Մեր քաղաքում մի հարուստ կա, նա մինուճար մի աղջիկ ունի՝ մի քանի հազարանոց օժիտով, և աղջիկը ինքն էլ շատ հիանալի աղջիկ է, և հերն էլ ուզում է ինձ հետ բարեկամանալ, ինչո՞ւ, օրինակի համար, հենց այդ աղջկան չուզեմ: Այդպես չի՞: Մանավանդ որ, փա՛ռք աստծու, երկու հատ էլ խնամախոս են ընկել մեջտեղ ու վազվզում են նրանց մոտից՝ ինձ մոտ, իմ մոտից՝ նրանց մոտ և ինձ գոռում, որ այդ ամենը որքան կարելի է շուտ լինի, որովհետև, տեսնո՞ւմ եք դրանց, ժամանակ չունեն, իրենք էլ, ախար, աղջկերք ունեն մարդու տալու. դեռ հալա դրանց էլ հյուրասիրեցի՝ իրենց մատուցած ծառայության համեմատ... Բայց թե այդ մասին չէ խոսքը:

Կարճ ասած, որոշված էր, որ խոսք տալու համար հանդիպենք, բայց թե հիմիկվա ժամանակները առաջվանը չեն: Կար ժամանակ, որ ջահելներին նրանց բացակայությամբ էլ էին նշանում. գալիս էիր տուն, շնորհավորում, և վե՛րջ: Իսկ հիմի մոդան էնպես է, որ նախ և առաջ պիտի ջահելների հետ խոսես, որպեսզի նրանք իրար հետ հանդիպեն ու ասեն, թե արդյոք միմյանց հավանո՞ւմ են, թե չէ... Բայց այդ մասին կարիք էլ չկա ասելու, քանի որ առանց այդ էլ նրանք հանդիպում են... Ավելի լավ, նշանակում է: Եվ ահա ես իմ տղային հարցնում եմ. «Քե՛զ, Պեյսենյա, դուր գալի՞ս է այսինչի աղջիկը»: Իսկ նա կարմրատակում է ոնց որ կակաչը ու չի պատասխանում: «Դե, վնաս չունի, մտածում եմ, լրությունը համաձայնության նշան է... Չի պատասխանում, նշանակում է, չի առարկում»: Իսկ որ կարմրատակեց, կա- չկա ամաչում է: Եվ որոշված էր, որ հանդիպեն երեկոյան, սկզբում ինչպես ընդունված է, հարսնացուի մոտ, իսկ հետո, ինձ մոտ: Կարելի էր կարծել, թե էլ ի՞նչ է մնում: Հետևաբար պետք է կաթնահունց թխել ու ընթրիքի համար պատրաստություն տեսնել, ինչպես որ կարգն է: Բայց այդ մասին չէ խոսքը:

Եվ եղև օր, արթնանում եմ առավոտյան, իսկ ինձ մի նամակ են տալիս: Որտեղի՞ց է: Ինչ-որ մի կառապան է բերել: Վերցնում եմ նամակը, բաց եմ անում, սկսում կարդալ, աչքերս մթնում են: Ի՞նչ նամակ է: Հիմա կիմանաք: Ինձ գրում է իմ Պեյսյան, որպեսզի ես չվիրավորվեմ, որ նա մեկնել է Բեյրութի հետ... Հասկանո՞ւմ եք: Առանց մեր գիտության, ամուսնանալու... լսո՞ւմ եք: Որպեսզի ես նույնիսկ նրանց փնտրելու փորձ էլ չանեմ, որովհետև նրանք արդեն հեռու են գտնվում այստեղից... Զգո՞ւմ եք: Իսկ երբ, աստված հաջողի, նրանք ամուսնանան, ինչպես օրենքով ընդունված է, կվերադառնան... Ձեզ ո՞նց է դուր գալիս այդպիսի մի նամակը: Դե, կնոջս մասին ասելու հարկ չկա, նա երեք անգամ ուշագնաց եղավ, որովհետև չէ՞ որ ինքն է սկանդալի պատճառը, չէ՞ որ Բեյրութը նրա՛ ազգականն է և ոչ թե ի՛մ:

— Դե ա՛նքեզ,— ասում եմ ես նրան,— օձ տաքացրիք ծոցիդ մեջ...

Եվ նրա գլխին թափեցի այն ամենը, ինչ կուտակվել էր սրտիս մեջ, հատուցեցի ըստ արժանվույն... Բայց թե այդ մասին չէ խոսքը:

Կարիք չկա, որ ձեզ պատմեմ, դուք ինքներդ էլ եք հասկանում, թե այդ բանը ոնց էր ինձ այրում ու փոթոթում: Պատկերացնում եք, վերցնում ես ուրիշի աղքատ երեխուն, որք, չփլախ աղջկան, դաստիարակում և ուզում ես երջանկացնել, իսկ նա ահա թե ինչ է անում, ճամփից շեղում է եղբորդ տղային... Ես բռնում էի, ոտքերս խփում գետնին, մազերս քաշում, քիչ էր մնում խելագարվեմ: Բայց մյուս կողմից էլ մտածեցի, ինչո՞վ կօգնի իմ գայրույթը: Ինչի՞ կհասնեմ ոտքերս դոփելով: Հարկավոր է որևէ բան ձեռնարկել, միգուցե հաջողվում է կանխել: Ամենից առաջ ես ինձ զգեցի «պետերի» մոտ ու յուրեցի որտեղ որ պետք էր և հայտարարեցի, որ ինձ մոտ ապրում էր իմ ազգականուհին, այսպես ու այսպես, որ նա ինձ թալանել է, խելքից հանել է իմ որդուն (չէ՞ որ Պեյսյային որդեգրել էի), և նրա հետ փախել, աստված գիտե թե ուր:

Հետո ես սկսեցի աջ ու ձախ փողեր տալ, հեռագրեր ուղարկեցի աշխարհի բոլոր ծայրերը, մեր օկրուզի բոլոր քաղաքներն ու ավանները... Եվ աստված օգնեց, նրանց բռնեցին: Որտե՞ղ բռնեցին: Հենց մեր կողքին, մի փոքրիկ քաղաքում: Ծնորհավորո՞ւմ եմ ձեզ:

Երբ բարի լուրը եկավ, որ նրանց բռնել են, ես պետերի հետ նստեցի ու գնացի ուղղակի այն ավանը: Չեմ պատմի, թե ինչպես գնացինք: Ես ամբողջ ժամանակ վախենում էի... իսկ եթե նրանք արդեն ամուսնացել են, այն ժամանակ ամեն ինչ կորած է, ինչպես ասում են՝ ոչ հորթը կընկնի ձեռքներս, ոչ էլ պարանը... Բայց աստված օգնության եկավ, մենք տեղ հասանք, նրանք դեռ չէին ամուսնացել: Բայց այդտեղ մի նոր դժբախտություն վրա եկավ. քանի որ ես հայտարարել էի, թե ինձ թալանել են, ապա մինչև դատ ու դատաստան կտեսնեին, նրանց բանտ նստեցրին: Նստեցրին. հասկանալի է, որ ինձ համար դա էլ լավ չէր. ես աղմուկ բարձրացրի, որ ինձ թալանողը նա՛ է, ազգականուհիս այսինքն, իսկ նա՝ որդիս այսինքն (քանի որ իմ տղան էր համարվում), անմեղ է: Բայց, երբ տղայիս ուզեցին բաց թողնել, նա, այսինքն՝ Պեյսյան, հայտարարեց՝ «Եթե գողացել ենք, ուրեմն երկուսով ենք գողացել»: Լսեցի՞ք: Այդ նա, էն սատանա աղջիկն էր համոզել, որ այդպես ասի: Ա՛յ թե ինչի էր ընդունակ ստոր արարածը... Դե, ասացեք խնդրեմ, էլ ինչո՞ւ բարի լինել, ինչու խղճալ թշվառ որբին: Ես ձեզ եմ հարցնում, այդ աղջիկը արժանի՞ էր դրան: Ինչ ասել կուզի: Քիչ արյուն չպղտորեցի, մինչև որ նրանց ազատեցի, որովհետև հանուն Պեյսյայի, ես պետք է ազատեի նաև նրան: Եվ մենք վերադարձանք տուն: Բայց թե այդ մասին չէ խոսքը:

Հասկանալի է, որ ես նրան՝ աղջկան, այլևս տուն չթողեցի, նրա համար գյուղում հենց իր ազգականի մոտ մի բնակարան վարձեցի, սնունդն էլ հետը. բարեկամին ասում էին Մոյշե-Մեյեր, հասարակ մարդ էր, ռանչպար: Իսկ իմ Պեյսյային ես տարա տուն և սկսեցի համոզել:

— Ողորմա՛ծ աստված,— ասում եմ նրան,— ես քեզ որդեգրեցի, դարձրի իմ հարազատ զավակը, տալիս եմ քեզ մի քանի հազար՝ որպես օժիտ, քեզ դարձնում եմ ողջ ունեցվածքիս ժառանգորդը, իսկ դու այսպիսի սկանդալ ես սարքում:

— Իսկ ի՞նչ սկանդալ,— պատասխանում է նա,— Բեյզյան ձեզ նույնպիսի ազգական է, ինչպես և ես: Նա էլ ունի ազնվական ծագում:

— Դու ի՞նչ ես հավասարվում նրան,— ասում եմ ես:— Քո հայրը իմ հարազատ եղբայրն էր և կարգին էլ մարդ էր, իսկ Բեյզյայի հայրը, թող հանգուցյալն ինձ ների, թոկից փախածի մեկն էր ու դրան էլ ավելացրած՝ խաղամուլ...

Նայում եմ, որ կինս ուշքից անցնում է, սկսվում է հարայ-հրոց, ասեկոսե... Սա ի՞նչ բան է: Նա չի կարող լսել, թե ինչեր եմ ասում իր քրոջ ամուսնու հասցեին: Նրանք երկուսով էլ թե՛ քույրը, թե՛ ամուսինը մյուս աշխարհումն են, նրանց պետք է հանգիստ թողնե՛մ թե ոչ: Լսեցի՞ք:

— Բայց ախր նա,— ասում եմ,— քո փեսան, թող ներող լինի, համենայն դեպս, փուչ-փչացածի մեկն էր:

Նա նորից է ուշքից անցնում: Փորձա՛նք, ուրիշ ոչինչ. քո սեփական տան միջին էլ խոսելու իրավունք չունես: Բայց այդ մասին չէ խոսքը:

Կարճ ասած, ես իմ Պեյսյային, ինչպես պետքն է, բուռս հավաքեցի, սկսեցի աչքս վրան պահել, չորս կողմս նայել, որպեսզի նա իմ գլխին դարձյալ նույն ֆոկուսը չսարքի: Եվ տերը ինձ փրկեց, տղաս գնաց ճշմարիտ ճանապարհով, սկսեց ինձ լսել և մի բարի ժամ նշանվեց, դարձավ փեսացու, ճիշտ է, հարսնացուն մի երևելի հարսնացու չէր, բայց, համենայն դեպս, կարգին տնից էր, անվանի մարդու աղջիկ, օժիտով և... Դե, մի խոսքով, ինչպես որ ինձ վայել է... Եվ ես գտնվում էի յոթներորդ երկնքում: Լավ է, այնպես չէ՞: Բայց թե մի շտապեք, հիմա կլսեք պատմությունը:

Մի օր գալիս եմ տուն ճաշելու, լվացվում եմ, սեղան նստում, հացը օրհնում, նայում եմ, տեսնում Պեյսյան չկա: Գլխումս մի միտք կայծակեց. իսկ եթե հանկարծ արանքը ճղել է: Հարձակվում եմ կնոջս վրա. «Ո՛ւր է Պեյսյան», «չգիտեմ»: Կերա ու վազեցի քաղաք, էստեղ, էնտեղ, ոչ ոք չգիտի: Մարդ ուղարկեցի գյուղ, ազգականի՝ Մոյշե-Մեյերի մոտ, իմանալու, թե ոնց է Բեյզյը: Իսկ սա նամակ է գրում ինձ, թե Բեյզյը դեռ երեկվանից գնացել է քաղաք, մոր գերեզմանին այցելության: Ես գործի անցա, սրտիս հերսերը, ինչպես միշտ, թափեցի կնոջս վրա, որովհետև այս ամբողջ դժբախտությունը նրա երեսից էր, չէ՞ որ աղջիկը նրա ազգականն էր: Բայց թե այդ մասին չէ խոսքը:

Վազեցի ոստիկանատուն, ամեն տեղ հեռագիր սովեցի, մարդիկ դրկեցի, փողեր եմ ցնցխում— չկան, կարծես սկել են ջրի տակ: Քիչ է մնում գժվեմ, բռռում եմ, ճվում, դեսուդեն վազում, կաշվիցս դուրս գալիս, օգուտ չկա: Մի խոսքով, անցավ երեք շաբաթ. մագ մնաց, որ խելագարվեմ: Հանկարծ մի նամակ է ստացվում շնորհակալական. նրանք արդեն, փա՛ռք աստծու, ամուսնացել են, աստված չարը խափանի, բարին կատարի, այժմ արդեն ինձանից չեն վախենում: Լսեցի՞ք: Հիմա այլևս նրանց չեն կարողանա հետապնդել և բանսարկություններ անել: Հասկանո՞ւմ եք: Նրանք միմյանց սիրում են դեռևս մանկությունից և այժմ արդեն հասել են այն բանին, ինչի ձգտում էին: Իսկ ինչո՞վ պիտի ապրեն նրանք: Այդ մասին անհանգստանալու կարիք չկա. նա՛ Պեյսյան պատրաստվում է քննությունների համար, որպեսզի ինստիտուտ ընդունվի և բժշկություն սովորի, իսկ աղջիկն էլ մանկաբարձություն է ուսանում: Լսած կա՞ք էսպես բան: Իսկ մինչ այդ, իրենք երկուսով դասեր են տալիս և ամսական վաստակում՝ աստծու օգնությամբ մինչև տասնհինգ ռուբլի: Բնակարանը նստում է վեց ու կես ռուբլի, ութ ռուբլի տալիս են սննդի, իսկ մնացածը՝ աստված ողորմած է: Լսո՞ւմ

եք: «Դե լավ, սպասեցեք, կամաց-կամաց կսկսեն սովից սատկել, մտածում եմ, այն ժամանակ մոտս կգաք, իսկ ես ձեզ ցույց կտամ, թե ո՞նց է աշխարհի բանը»: Ես կնոջս ասում եմ.

— Հիմա տեսնո՞ւմ ես, թե ինչ է նշանակում, երբ ձուկը գլխից է հոտած լինում: Այդպիսի շառլատան, խաղամուլ հորից լավ բան սպասել չէր կարելի:

Այդպես շշպոում եմ, իսկ նա գոնե մի բառ էլ է ասի:

— Չէ՞ որ կար ժամանակ, որ դու ուշքից անցնում էիր, երբ խոսում էի քո էն աննման փեսայի մասին, հիմի՞ ինչու ուշագնաց չես լինում:

Բայց թե պատից ձայն դուրս գալիս է, նրանից էլ գալիս է:

— Կարծում ես, թե ես չգիտե՞մ,— ասում եմ ես,— դու նրանց կողմն ես: Որ այս բոլորը հենց քեզանի՞ց է գալիս:

Լռում է, ոչ մի խոսք չի ասում: Եվ ինչ կարող է պատասխանել, երբ զգում է, որ ես ճիշտ եմ: Նա գիտե, որ ինձ համար շատ ծանր է. ախր ինչն՞ էլ էի արժանի, որ իմ բարության համար այդ ձևով հատուցեին: Բայց այդ մասին չէ խոսքը:

Կարծում եք ա՞յդ է բոլորը: Սպասեցեք, դեռ հապա ինչե՛ր եք լսելու:

Մի խոսքով, անցավ մեկ տարի: Նրանք նամակ գրում են, բայց փողի մասին ոչինչ չեն հիշատակում: Եվ հանկարծ մի շնորհավորական նամակ է ստացվում, տղա են ունեցել և ինձ հրավիրում են թլպատման արարողությանը:

— Աչքդ լո՛ւս բարի լուրի համար,— ասում եմ ես կնոջս:— Հանաք բան հո չի: Ա՛յ քեզ փառահեղ հրավերք... Եվ անունն էլ քո էն քնձոտ փեսայի անունը կդնեն:

Չպատասխանեց, բայց սփրթնեց ինչպես պատի ծեփը, հագնվեց և տնից դուրս եկավ: Մտածում եմ՝ հիմա կգա: Սպասում եմ մի ժամ, սպասում՝ երկու ժամ, երեք ժամ, չորս ժամ, արդեն օրը իրիկնացել է, արդեն խոր գիշեր է— չկա: Հետաքրքիր պատմություն է, թեև կարճ: Մի խոսքով, էլ ինչ ասեմ, գնացել է նրանց մոտ և ահա արդեն երկու տարի է ոչ գալիս է, ոչ էլ անգամ մտածում է գալու մասին: Այսպիսի բան լսած կա՞ք: Սկզբում սպասում էի, ասում էի՝ միգուցե նամակ կգրի իսկ երբ տեսա, որ սպասելը միտք չունի, ինքս գրեցի: «Սա ինչ բան է, աշխարհի մեջ հո խայտառակ չե՞նք լինելու»: Իսկ նա ինձ պատասխանում է, որ իր աշխարհը այնտեղ է, որտեղ իր երեխեքն են: Լսե՞լ եք այսպիսի բան: Նորածին թոռնիկի անունը իմ եղբոր անունով դրել են Գերշելե, նա իր համար աշխարհից թանկ է: Մի ուրիշ այդպիսի Գերշելե, գրում է նա, թեկուզ աշխարհը ոտքի տակ տաս՝ ծայրից-ծայր, չես ճարի: Եվ մաղթում է ինձ ապրել ու ծերանալ առանց իրեն՝ պատվի ու հարստության մեջ: Էսպես բան լսած կա՞ք:

Ես նրան գրում եմ նորից ու նորից և վճռաբար հայտարարում, որ մի գրոշ անգամ չեմ ուղարկի: Իսկ նա պատասխանում է, որ իրեն փող հարկավոր չի: Լսած կա՞ք: Այդ ժամանակ ես նորից եմ գրում, որ զրկում եմ նրան ժառանգությունից և իմ բոլոր փողերը կտակում եմ համայնքին: Իսկ նա չի ծուլանում և պատասխանում է, որ ոչ մի պահանջ չունի ինձանից: Հասկանո՞ւմ եք: Որ նա ապրում է երեխեքի մոտ, պատիվ ու հարգանք է վայելում, և տա աստված, որ միշտ այդպես լինի, որովհետև Պեյսյան արդեն համալսարան է ընդունվել, իսկ Րեյզը շուտով մանկաբարձ կդառնա, որ նրանք արդեն վաստակում են ամսական համարյա յոթանասուն ռուբլի: Հասկանալի՞ է ձեզ: Իսկ ինչ վերաբերում է ժառանգությանը, ապա ես կարող եմ իմ բոլոր ունեցվածքը թեկուզ հենց այսօր

կտակել՝ ում որ ցանկանամ, թեկուզ եկեղեցուն: Լսեցի՞ք: Եվ վերջացնում է նրանով, որ ես պարզապես խելագար եմ: Որ մարդիկ մատով են ցույց տալիս ինձ՝ իմ արարմունքի համար:

«Ի՞նչ դժբախտության մասին է խոսքը, գրում է նա, որ քո եղբոր որդին ամուսնացել է իմ քրոջ աղջկա հետ: Քեզ էլ ի՞նչ է պետք, անխե՛ղք մարդ»: Լսած կա՞ք այսպիսի բան... «Հապա մի տեսնեիր, թե երեխան՝ Գերշելեն, ո՞նց է մատով ցույց տալիս պապիկի նկարն ու ասում՝ «պա-պիի՛» դու ինքդ քեզ կապտակեիր...» Հասկանո՞ւմ եք: Այդպես է գրում նա այնտեղից: Բայց թե այդ մասին չէ խոսքը:

Դե, միթե պետք չէ, որ մարդ ամուր լինի ինչպես երկաթ: Դուք ի՞նչ եք կարծում, կարծում եք սիրտս չի՞ փոթոթվում, երբ տուն եմ գնում ու պտտվում չորս պատի մեջ: Սկսում եմ մտքի մեջ ընկնել, թե ինչի՞ համար եմ ապրում, ասացեք խնդրեմ, արար-աշխարհում: Ո՞ր մեղքիս համար է այսպիսի վախճանը: Ո՞ր մեղքիս համար է այսպիսի ծերությունը: Ո՞ր: Իմ բարության՞: Իմ զգվելի փափուկ բնավորության՞ նա...

Ներեցեք ինձ, հենց սկսում եմ խոսել այդ մասին, աչքերս թրջվում են և չե՛մ կարողանում, չե՛մ կարողանում խոսել...

Օ՛հ, պետք չէ չափից դուրս բարի լինել: Լսո՞ւմ եք, պետք չէ չափազանց բարի լինել: